

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 19/03

«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության  
վարչության նիստի

ք. Երևան

14 հունիսի 2019թ.

### Մասնակիցների ցուցակ՝

- |                        |                        |
|------------------------|------------------------|
| 1. Ալբերտ Տոնեյան      | 7. Գրիգորի Սաղյան      |
| 2. Անդրանիկ Ալեքսանյան | 8. Իգոր Մկրտումյան     |
| 3. Աննա Կարախանյան     | 9. Լիաննա Գալստյան     |
| 4. Արամ Վերդյան        | 10. Կոլյա Հովհաննիսյան |
| 5. Արման Ներսիսյան     | 11. Սիրանուշ Վարդանյան |
| 6. Արմեն Մուրադյան     | 12. Քրիստինե Գյոնջյան  |

Նիստի սկզբում միաձայն նիստի նախագահող ընտրվեց Իգոր Մկրտումյանը, քարտուղար՝ Աննա Կարախանյանը: Նախագահողը տեղեկացրեց, որ նիստն իրավազոր է և առաջարկեց հաստատել օրակարգը: Օրակարգի վերաբերյալ ներկայացվեցին առաջարկություններ: Արդյունքում, միաձայն հաստատվեց հետևյալ օրակարգը՝

### Օրակարգ՝

1. Մի շարք անձանց «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպությանն անդամագրելու մասին
2. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության կանոնադրության նախագծին հավանություն տալու մասին
3. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրենի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու և «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն նշանակելու մասին

1. Մի շարք անձանց «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպությանն անդամագրելու մասին

Կազմակերպության վարչության անդամները տեղեկացվեցին, որ կազմակերպությունը մի շարք անձանցից (Ռուզաննա Ավետիսյան, Մանուկ Անդրեասյան, Մարիամ Աբգարյան, Արսեն Համբարձումյան, Արթուր Եփրեմյան, Թերեզա Կարապետյան, Մարինե Հովհաննիսյան, Ալիսա Հովհաննիսյան, Ռուբեն Մուրադյան) ստացել է դիմումներ՝ կազմակերպությանն անդամագրվելու խնդրանքով: Առաջարկություն հնչեց բավարարել ներկայացված դիմումները: Առաջարկը դրվեց քվեարկության և միաձայն ընդունվեց:

Որոշում՝ Բավարարել Ռուզաննա Ավետիսյանի, Մանուկ Անդրեասյանի, Մարիամ Աբգարյանի, Արսեն Համբարձումյանի, Արթուր Եփրեմյանի, Թերեզա Կարապետյանի, Մարինե Հովհաննիսյանի, Ալիսա Հովհաննիսյանի, Ռուբեն Մուրադյանի դիմումները և ընդունել նրանց որպես «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության անդամ:

2. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության կանոնադրության նախագծին հավանություն տալու մասին

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ պարոն Արման Ներսիսյանը՝ ներկայացնելով կազմակերպության նոր խմբագրությամբ շարադրված կանոնադրության նախագիծը: Ելույթի ավարտից հետո կազմակերպության վարչության անդամների կողմից տրվեցին հարցեր (որոնց տրվեցին համապատասխան պարզաբանումներ), ինչպես նաև ներկայացվեցին մի շարք առաջարկություններ նախագծում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

Հարցի վերաբերյալ քննարկումների արդյունքում առաջարկվեց նախնական հավանություն տալ նոր խմբագրությամբ շարադրված կանոնադրության նախագծին, վարչության անդամների կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա լրամշակել այն և ներկայացնել կազմակերպության վարչությանը: Առաջարկը դրվեց քվեարկության և միաձայն ընդունվեց:

Որոշում՝

1. Նախնական հավանություն տալ «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության նոր խմբագրությամբ շարադրված կանոնադրության նախագծին:
2. Կազմակերպության գործադիր տնօրենին՝ կազմակերպության վարչության անդամների կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա լրամշակել կանոնադրության նախագիծը և ներկայացնել կազմակերպության վարչությանը:

3. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրենի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու և «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն նշանակելու մասին

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ պարոն Արման Ներսիսյանը՝ նշելով, որ ինքը ներկայացրել է դիմում՝ իր՝ որպես «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրենի լիազորությունները վաղաժամկետ (2019 թվականի հունիսի 18-ից) դադարեցնելու առաջարկությամբ: Ներկայացնելով նման առաջարկի շարժառիթները՝ պարոն Ներսիսյանը խնդրեց բավարարել այն:

Ծավալված քննարկման և քվեարկության արդյունքում ձայների 9 կողմ, 3 դեմ հարաբերակցությամբ որոշվեց բավարարել պարոն Արման Ներսիսյանի դիմումը և 2019 թվականի հունիսի 18-ից վաղաժամկետ դադարեցնել նրա՝ որպես «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրենի լիազորությունները:

Այնուհետ, առաջարկվեց «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության նոր գործադիր տնօրեն (մեկ տարի ժամկետով) նշանակել պարոն Անդրանիկ Ալեքսանյանին: Պարոն Ալեքսանյանի համաձայնությունն ստանալուց հետո, վերջինիս թեկնածությունը դրվեց քվեարկության և միաձայն ընդունվեց:

### Որոշում՝

1. 2019 թվականի հունիսի 18-ից վաղաժամկետ դադարեցնել «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Արման Ներսիսյանի լիազորությունները:
2. Մինչև 2020 թվականի հունիսի 18-ը գործողության ժամկետով «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն նշանակել Անդրանիկ Ալեքսանյանին (ՀՀ քաղաքացի, նույնականացման քարտ՝ 000255752, տրված՝ 11.11.2012 թվականին, 003-ի կողմից, հանրային ծառայությունների համարանիշ՝ 2202590170, հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արտաշիսյան փողոց, 2.44/4Ա, բն.15, էլեկտրոնային փոստի հասցե՝ [andranik.aleksanyan@isoc.am](mailto:andranik.aleksanyan@isoc.am)):

Նիստի նախագահող՝

Իգոր Մկրտումյան

Նիստի քարտուղար՝

Աննա Կարախանյան